ունևոր դասի շրջանում։ Այդ պարզ երևում է կալվածագրերի մեծ մասից, որոնք բոլորն էլ հիմնականում վերաբերում են խոջաներին, արհեստավորներին, առևտրականներին և այլն։ Հանգուցյալի թողած ժառանգությունը իրոք պետք է բավական շոշափելի լիներ, որպեսզի դրդեր նրա ժառանգներից մեկն ու մեկին հավատափոխության միջոցով դիմացինի ձեռքից խլելու ժառանգության իրավունքը։

Այսպես օրինակ, որոշակի վկայություն կա այն մասին, որ երևանցի մեծահարուստ խոջա-Սեթի որդի խոջա-Հակոբջանի սերունդները 17-րդ դարի վերջերին արդեն մահմեդականություն էին ընդունել[1]։ Որքան էլ որ տարօրինակ լինի, «ջադիդ-ուլ-իսլամների» մեջ կային նաև նախկին հայ հոգևորականներ։

Բռնի ասիմիլյացիայի նման երևույթների դեմ հայոց եկեղեցին մղում էր համառ և տևական պայքար։ 17—18-րդ դդ. պահպանվել են բազմաթիվ խնդրագրեր, գրված ժամանակի կաթողիկոսների կողմից, որոնց մեջ բողոք է հայտնվում այն մասին, որ վերոհիշյալ օրենքների հիման վրա, շատ հայեր, որոնք հեռավոր ազգակցական կապեր ունեն տարիներ առաջ վախճանված մեկի ժառանգների հետ, մահմեդականություն են ընդունում և դիմում են Շար'ին պահանջելով, որ այդ ժառանգների ձեռքից վերցվի նրանց ունեցվածքը ու տրվի իրենց։ Խնդրագրերում բազմիցս շեշտված է, որ հայերը ընդունված կարգով ջիզյա են վճարում և կատարում են մյուս հարկային պարտավորությունները, սակայն տեղական շարիաթական օրգանների կողմից շարունակաբար խրախուսվում են նման միտումնավոր հավատափոխության երևույթները և հրահրվում ժառանգական վեճեր։

Այս գանգատներին սովորաբար շահը պատասխանում էր չափազանց ստանդարտ ֆերմաններով, որոնց մեջ հրահանգվում էր տեղական խանեերին ու բեգլարբեգերին վերահասու լինել և հետևել, որ շարիաթական օրենքներին հակառակ անարդարացի որոշումներ չընդունվեն։

Բնորոշ է, որ հայ ռայաթների սոցիալ-իրավական վիճակի և հայոց եկեղեցու իրավունքների հարցի շուրջը հրապարակված ֆեթվաներն ու ֆերմանները գլխավորապես վերաբերում են 17-րդ դարի 60-ական թվականներին։ Հակոբ կաթողիկոս Ջուղայեցուն էր վիճակված վճռական պայքար մղել օրըստօրե սաստկացող ասիմիլյացիայի բացահայտ տենդենցների և հատկապես Էջմիածնի հարստահարման և նրա իրավունքների սահմանափակման քաղաքականության դեմ, որ մերկապարանոց կերպով դրսևորվում էր հատկապես Սաֆիկուլի խանի բեգլարբեգության շրջանում (1666—1674 թթ.)։

Հակոբ Ջուղայեցին այդ թվականներին հարկադրված է եղել Դիվան-ալ-սադարաթից պահանջելու նորանոր ֆեթվաներ, որոնց մեջ խոսվում էր հայկական համայնքին հնուց անտի շնորհված այնպիսի իրավունքների մասին, ինչպիսիք էին օրինակ՝ հայկական ծեսերով ամուսնության, թաղման և այլ արարողությունների ազատությունները։

1669 թվականին մայրաքաղաքի Դիվան-ալ-սադարաթից ստացված մի ֆեթվայում կարդում ենք. «Իսլամի հարգարժան և իմաստուն գիտունները, որոնց խոսքը թող շարունակի իշխել մինչև դատաստանի օրը, ինչ

[1] ՄՊՎ, թղթ. 1ա, վավ. № 82։